ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունիսի 2020թ. № 158

ԿԱՐԼԵՆ ԱՂՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2097229 վկայականը և Կարլեն Լենիկի Աղումյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարլեն Լենիկի Աղումյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06006 8-63 կադաստրային ծածկագրով 0,33 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վրա գտնվող 06006 8-63-1 կադաստրային ծածկագրով 111,9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 387» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2020թ. № 159

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ՂՈՐՈՒԽՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 0,00272 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով, հաշվի առնելով, որ Գագիկ Ղորուխչյանի կողմից տիրապետվող Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0508-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի փաստացի չափը կազմում է 0,04272 հեկտար, որից 0,04 հեկտարը Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,00272 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1989-ը և 1997 թվականներին կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել՝ Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի (ծնված 28.02.1968թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0508-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի և 0,04272 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 117,19 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և 2,91 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի կողմից տիրապետվող 0,04 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,00272 հեկտար հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 14 362 ՀՀ դրամ (1 քմ 528 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանին:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 73/1» հասցեն:

4. Գագիկ Ռոբերտի Ղորուխչյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումից և առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 15
ք.Սպիտակ